



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

26.06.2023թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հանրապետության և, մասնավորապես, Կոտայքի մարզի սիրելի՛ գորակոչիկներ,

Մեկնարկում է 2023 թվականի ամառային գորակոչը:

Այսօրվանից ձեզ համար սկսվում է կյանքի նոր փուլ, որն, անշուշտ, տարբերվում է ձեր կյանքի բնականոն ընթացքից:

Այսօր դուք նոր պարտավորություն եք ստանում՝ պաշտպանելու մեր պետության սահմանները և ապահովելու մեր սահմանների անվտանգությունը:

Մա մի փուլ է, որտեղ դուք կոփվելու եք որպես հայ տղամարդ՝ հայրենասեր, պատվախնդիր, պատասխանատու:

Տղե՛րք,

ձեր կյանքի այս նոր փուլում եղեք զգոն, ընկերասեր, շրջահայաց, յուրաքանչյուր իրավիճակում չկորցնենք այս կարևոր հատկանիշները՝ գործելով որպես սեփական պարտականությունները քաջ գիտակցող, սթափ, խիզախ ու արի Ձինվոր:

Ձեր հրամանատարներին վերաբերեք որպես ավագ ընկերների, նրանցից քաղեք լավագույնը, որպեսզի նոր փորձություններով ու բացահայտումներով լի երկու տարիները հաղթահարեք հեշտությամբ:

Իսկ մեր մաղթանքը մեկն է՝ խաղաղ և անփորձանք ծառայություն բոլորիդ, ձեր ծնողներին ու հարազատներին էլ՝ հպարտության զգացումին միախառնված համբերություն և ուժ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ